ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«01» օգոստոսի 2019 թվականի N:159 ք.Գյումրի

ԱՐՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N:1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2019 թվականի հունիսի 18-ի N:27-2/27-2/10216-2019 գրությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի 2019 թվականի հուլիսի 24-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Արտակ Հայրապետյանին 2019 թվականի օգոստոսի 2-ին գործուղել քաղաք Երևան՝ «Մաստեր Սթայլ» ուսումնական կենտրոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ «Բանակցությունների և հարցազրույցների վարում, հաղորդակցման հմտություններ» և «Հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրեր, ներքին աուդիտի ժամանակ դրանց օգտագործման հմտություններ» թեմաներով դասընթացին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2019 թվականի օգոստոսի 2-ին:
3. Արտակ Հայրապետյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Հարությունյանին:

4. Արտակ Հայրապետյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է